ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

_Հայոց լեզվի և գրականության_
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __8__

«_23_» __հունվար__ 2024 թ.

# ՀԼԳ/բ-072 «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-3» ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.6 Հայոց լեզու եւ գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Հայոց լեզու և գրականություն
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ հեռակա
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ 2-րդ, 2-րդ կիսամյակ

Դասախոս(ներ)՝ Վալերի Փիլոյան

Էլ. հասցե/ներ՝ pv60.60@mail.ru

Վանաձոր- 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագիրչ

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

«Արտասահմանյան գրականության պատմություն-3» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.** Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 17-րդ, 18-րդ դդ. արևմտաեվրոպական գրականության ընդհանուր զարգացումն ու օրինաչափությունները, հատկանշական կողմերն ու տարբերակիչ առանձնահատկությունները: Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր գիտելիքները արտասահմանյան գրականությունից: Նախապատրաստել արտասահմանյան գրականության հաջորդող պատմաշրջանների հետագա ուսումնասիրությանը:

**2.2.** Դասընթացի խնդիրներն են՝

- Ձևավորել պատկերացում ուսումնասիրվող դարաշրջանների յուրօրինակության, գրական հարընթացի հիմնական միտումների մասին, ինչպես նաև՝ փիլիսոփայական տեսությունների՝ գրականության վրա ունեցած ազդեցությունների մասին:
- Ուսումնասիրել արտասահմանյան գրականության գրական ուղղությունները նշված դարաշրջանների գրականության զարգացման ընթացքում՝ համաշխարհային գրականության համատեքստում:
- Վերլուծել նշված դարաշրջանների առավել նշանակալից ստեղծագործությունները և նշել դրանց տեղը գրականության զարգացման հարընթացի մեջ:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/.**

«Արտասահմանյան գրականության պատմություն-3» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների հիմնավոր գիտելիքների առկայությունը արտասահմանյան գրականության նախորդ շրջանների, հայ և ռուս գրականության, գրականագիտության վերաբերյալ, ինչպես նաև՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, ինքնուրույն վերլուծություն կատարելու հմտությունների առկայությունը:

## 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[1] և /կամ կոմպետենցիաները.

«Արտասահմանյան գրականության պատմություն-3» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

- **իմանա** ուսումնասիրվող գրական դարաշրջանի հետ կապված տերմիններն ու հասկացությունները, գրական դարաշրջանի հիմնական փուլերը, կարողանա կողմնորոշվել նշված դաշտում.
- **կարողանա** ընդհանուր կերպով ներկայացնել առանձին գրողի ստեղծագործությունը, որոշարկել պատմա-գրական և մշակութային հարընթացի մեջ նրա տեղն ու դերը, կարողանա պատմել գրողի ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունների մասին, կատարել ընդհանրացնող եզրակացություններ գրողի ստեղծագործության մասին,
- **տիրապետի** գեղարվեստական տեքստի գրականագիտական վերլուծության հմտություններին, կարողանա մեկնաբանել այն և բացատրել գեղարվեստական ստեղծագործության պոետիկայի և ոճի առանձնահատկությունները:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

<u>Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

<u>ԳԿ1</u> վերլուծելու և սինթեզելու ունակություն,
<u>ԳԿ4</u> մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
<u>ԳԿ9</u> խնդիրների լուծում,
<u>ԳԿ10</u> որոշումների ընդունում:

***Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝***

<u>ՀԳԿ1</u> գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
<u>ՀԳԿ2</u> հետազոտություններ կատարելու ունակություններ,
<u>ՀԳԿ3</u> սովորելու ունակություն,
<u>ՀԳԿ8</u> ինքնուրույն աշխատելու ունակություն,

<u>Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)</u>

<u>ԱԿ2</u> հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
<u>ԱԿ4</u> ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
<u>ԱԿ6</u> կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
<u>ԱԿ11</u> տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
<u>ԱԿ14</u> տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

---

[1] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[2].**

«Արտասահմանյան գրականության պատմություն-3» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և բանասիրության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. **Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

| Չափանիշ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | **2 կրեդիտ/60 ժամ** |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ |
|---|---|
| Դասախոսություն | 4 |
| Գործնական աշխատանք | 4 |
| Ինքնուրույն աշխատանք | 52 |
| **Ընդամենը** | 60 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ստուգարք |

7. Ուսումնական աշխատանքների տեսակները[3] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը

[2] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

[3] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[4]՝

  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
  - **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներնեն են**՝ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

9. **Ուսումնառության մեթոդներն են**՝ թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

## 10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[5].

<table>
<tr><th rowspan="2">հ/հ</th><th rowspan="2">Թեմա<br>(բաժին)</th><th colspan="3">Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների</th></tr>
<tr><th>Դասախոսություն</th><th>Գործնական աշխատանք</th><th>Ինքնուրույն աշխատանք</th></tr>
<tr><td>1.</td><td>17-րդ դարի գրականություն:<br>Ներածություն:<br>Ջոն Միլթոնի ստեղծագործությունը: Լոպե դե Վեգայի և Պեդրո Կալդերոնի ստեղծագործությունը:<br>Կլասիցիզմ: Պիեր Կոռնելի ստեղծագործության հիմնական փուլերը:<br>Ժան Բատիստ Մոլիերի թատերգության տեսակների բազմազանությունը:<br>Ժան Ռասինի թատերգությունը:</td><td rowspan="2">2</td><td>1</td><td>14</td></tr>
<tr><td>2.</td><td>18-րդ դարի լուսավորական գրականություն:<br>Դանիել Դեֆոյի ստեղծագործությունը:<br>Ջոնաթան Սվիֆթի ստեղծագործությունը:<br>Սենտիմենտալիզմ: Լորենս Սթերն: Սթերնի գրական նորարարությունը:<br>Ռոբերտ Բյորնս ստեղծագործությունը:</td><td>1</td><td>14</td></tr>
<tr><td>3.</td><td>Վոլտերի ստեղծագործական ուղու պարբերացումը:<br>Ժան-Ժակ Ռուսսոյի ստեղծագործությունը:<br>Դենի Դիդրոյի  և Լեսսինգի տեսությունը դրամայի և թատրոնի մասին:<br>Պիեր Բոմարշեի կատակերգությունները:</td><td rowspan="2">2</td><td>1</td><td>12</td></tr>
<tr><td>4.</td><td>Գոտհոլդ Էֆրաիմ Լեսսինգի գեղագիտական հայացքների ձևավորումը և զարգացումը:<br>Յոհան Քրիստոֆեր Ֆրիդրիխ Շիլլերի ստեղծագործությունը:<br>Յոհան Վոլֆգանգ Գյոթեի ստեղծագործական ուղու պարբերացումը:</td><td>1</td><td>12</td></tr>
<tr><td colspan="2">ԸՆԴԱՄԵՆԸ</td><td>4</td><td>4</td><td>52</td></tr>
</table>

[5] Նման է օրացուցային պլանին

## 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Արտամոնով, XVII-XVIII դդ. արևմտաեվրոպական գրականության պատմություն | 1986 |
| **Գեղարվեստական գրականություն** | | |
| 2. | Պիեր Կոռնել «Սիդ» | |
| 3. | Ժան Բատիստ Մոլիեր «Դոն Ժուան, «Միզանտրոպ» | |
| 4. | Ժան Ռասին «Ֆեդրա» | |
| 5. | Դանիել Դեֆո «Ռոբինզոն Կրուզո» | |
| 6. | Ջոնաթան Սվիֆթ «Գուլիվերի ճանապարհորդությունները» | |
| 7. | Աբբա Պրևո «Ասպետ դը Գրիոյի և Մանոն Լեսկոյի պատմությունը» | |
| 8. | Վոլտեր «Կանդիդ կամ Լավատեսություն» | |
| 9. | Դենի Դիդրո «Միանձնուհի» | |
| 10. | Գոտհոլդ Էֆրաիմ Լեսինգ «Էմիլյա Գալոտի», «Նաթան իմաստուն» | |
| 11. | Յոհան Վոլֆգանգ Գյոթե «Երիտասարդ Վերթերի տառապանքները», «Ֆաուստ» | |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[6] |
|---|---|---|---|---|
| 1. | 17-րդ դարի գրականություն:<br>Ներածություն:<br>Ջոն Միլթոնի ստեղծագործությունը: Լոպե դե Վեգայի և Կալդերոնի ստեղծագործությունը: | Կլասիցիզմի և բարոկոյի գեղագիտական սկզբունքները:<br>Միլթոնը՝ XVII դարի անգլիական գրականության խոշորագույն դեմք:<br>«Դրախտ կորուսյալ» պոեմը՝ որպես Միլթոնի ստեղծագործության գագաթնակետ: Պոեմի աստվածաշնչյան հիմքերը և արդիական ուղղվածությունը:<br>Լոպե դե Վեգայի «Ոչխարի աղբյուրը», «Սևիլյայի աստղը», պիեսները: | | ՊԳ1 |

[6] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Կալդերոնի ստեղծագործությունը: | | |
| 2. | Կլասիցիզմ: Պիեր Կոռնելի ստեղծագործության հիմնական փուլերը:<br>Ժան Բատիստ Մոլիերի թատերգության տեսակների բազմազանությունը:<br>Ժան Ռասինի թատերգությունը: | Կլասիցիզմի առաջացումը, գաղափարագեղագիտական հիմքերը: Կլասիցիզմի թատերգությունը զարգացման առաջին շրջանում: «Սիդ»-ը և ֆրանսիական ազգային գիտակցությունը XVII դարի առաջին կեսին: Պետության դեմ դավադրության բացահայտումը և անձնական դրդապատճառների հաղթահարումը «Հորացիուս» ողբերգության մեջ:<br>Հայկական կերպարները «Պոլիկտոս» ողբերգության մեջ: Կեղծիքի և երեսպաշտության ծաղրը «Տարտյուֆ» կատակերգության մեջ: «Դոն Ժուան»-ի մոլիերյան մշակումը. կերպարի բարոյական անկումը և նրա երգիծական մերկացումը: Մոլիերի հայացքները «Միզանտրոպ»-ում:<br>Կլասիցիզմի բախումի հոգեբանական-բարոյագիտական բնույթը «Ֆեդրա», «Անդրոմաքե ողբերգություններում Ռասինը և հին հունական ողբերգությունը («Եվրիպիդես»): | 2 | ՊԳ1, 2, 3, 4 |
| 3. | 18-րդ դարի լուսավորական գրականությունը:<br>Դանիել Դեֆոյի ստեղծագործությունը:<br>Ջոնաթան Սվիֆթ ստեղծագործությունը: | Լուսավորական շարժման հիմնական փուլերը (Անգլիայում՝ XVII դարի վերջ և XVIII դարի սկիզբ, Ֆրանսիայում՝ XVIII դարի կեսեր, Գերմանիայում՝ XVIII դարի վերջին քառորդ և XIX դարի սկիզբ):<br>Դեֆոյի վեպերի ընդհանուր բնութագիրը: «Ռոբինզոն Կրուզո» (1719) վեպի գրական տեսակը: Ռոբինզոնի կերպարը և «Ռոբինզոնադի» էությունը: «Վայրենություն» և «Քաղաքակրթություն»: Դեֆոյի կարծիքը մարդկային կյանքի հիմքերի մասին. անհատ և հանրություն: Վեպը՝ որպես դարաշրջանի ոգու ինքնատիպ արտացոլում: Մարդու ուժը՝ որպես աշխարհը նվաճելու կարողության խորհրդանշան: Դեֆոյի մյուս վեպերը. «Մոլ Ֆլենդերս»:<br>Սվիֆթի «Հեքիաթ տակառի մասին» և «Համեստ առաջարկություն» պամֆլետները:<br>Սվիֆթը՝ բանաստեղծ-երգիծաբան: «Գուլիվերի ճանապարհորդությունները»: Վեպի երգիծական բնույթը: Գուլիվերի կերպարի զարգացումը: | | ՊԳ1, 5, 6 |
| 4. | Սենտիմենտալիզմ: Լորենս Սթերն Սթերնի գրական նորարարությունը: | Սթերնի բանավեճը 1740-1750-ական թվականների գրողների դեմ: | | ՊԳ1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ռոբերտ Բյորնսի ստեղծագործությունը: | Սթերնի «Դոկտոր Ուորիկի քարոզները» ժողովածուն: Սթերնի վեպերը. «Տրիստրամ Շենդիի՝ ջենտլմենի կյանքն ու կարծիքները» և «Զգացմունքային ճանապարհորդություն». կառուցվածքային և ոճական յուրահատկությունները: Մարդու ներքին կյանքի պատկերումը և կենտրոնացումը անհատական-զգացական աշխարհում: Դ. Յումի փիլիսոփայության ազդեցությունը Սթերնի ստեղծագործական մեթոդի ձևավորման գործում:<br>Ռոբերտ Բյորնս. ստեղծագործությունը: | | |
| 5. | Վոլտերի ստեղծագործական ուղու պարբերացումը:<br>Ժան -Ժակ Ռուսո. ստեղծագործությունը: | Վոլտերը և եկեղեցին: Դասականապաշտության և գաղափարապաշտության համադրությունը Վոլտերի ստեղծագործական մեթոդի մեջ: Լուսավորականությունը և Վոլտերի թատերգությունը:<br>Վոլտերի փիլիսոփայական արձակը: «Կանդիդ» Ռուսոյականության էությունը. բնություն և քաղաքակրթություն:<br>Ռուսսոն արվեստի մասին: | | ՊԳ1, 7, 8 |
| 6. | Դենի Դիդրոյի և Լեսսինգի տեսությունը դրամայի և թատրոնի մասին:<br>Պիեր Բոմարշեի կատակերգությունները: | Դ. Դիդրոն և հանրագիտակները: Դիդրոն՝ քննադատ, տեսաբան, «Հանրագիտարան»-ի ստեղծող: Ազնվական արվեստի քննադատությունը:<br>«Ռամոյի ազգականը» վիպակը և ազնվականության քննադատությունը:<br>Պիեր Բոմարշե. «Սևիլյան սափրիչ», «Ֆիգարոյի ամուսնությունը», «Հանցագործ մայրը»: | | ՊԳ1, 9, 10 |
| 7. | Գոտհոլդ Էֆրաիմ Լեսսինգի գեղագիտական հայացքների ձևավորումը և զարգացում:<br>Յոհան Քրիստոֆեր Ֆրիդրիխ Շիլլեր ստեղծագործությունը: | Ֆրանսիական դասականապաշտության քննադատությունը:<br>Լեսսինգը՝ դրամայի տեսակի ստեղծող գերմանական գրականության մեջ («Էմիլյա Գալոտի», «Նաթան իմաստուն»):<br>Շիլլերի պատմական թատերգությունները 1790-ականներին և 1800-ականներին: Լուսավորական տարրերը և գաղափարապաշտության բանարվեստը: «Վիլհելմ Տելը»՝ որպես հակաբռնակալական դրամա: Շիլլերի թատերգության ոճական առանձնահատկությունները: Շիլլերը բանաստեղծ՝ բալլադները և քնարերգությունը: | 2 | ՊԳ1, 10 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Յոհան Վոլֆգանգ Գյոթեի ստեղծագործական ուղու պարբերացումը: | Վ. Գյոթեն՝ նոր շրջանի գերմանական գրականության հիմնադիր: «Երիտասարդ Վերթերի տառապանքները» (1774)՝ որպես հոգեբանական-զգացական վեպ: Վերթերը՝ նոր մարդու կերպար: Վերթերի ներքին դրաման: Գլխավոր կերպարները (Ֆաուստ, Մեֆիստոֆել, Մարգարիտ, Հեղինե, Վագներ և այլք): Ֆաուստի կերպարի փիլիսոփայական և գեղարվեստական նշանակությունը: | | ՊԳ1, 11 |

## 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | 17-րդ դարի գրականություն: Ներածություն: Ջոն Միլթոնի ստեղծագործությունը: Լոպե դե Վեգայի և Կալդերոնի ստեղծագործությունը: | Կլասիցիզմի և բարոկոյի գեղագիտական սկզբունքները: Միլթոնը՝ XVII դարի անգլիական գրականության խոշորագույն դեմք: «Դրախտ կորուսյալ» պոեմը՝ որպես Միլթոնի ստեղծագործության գագաթնակետ: Պոեմի աստվածաշնչյան հիմքերը և արդիական ուղղվածությունը: Լոպե դե Վեգայի «Ոչխարի աղբյուրը», «Սևիլյայի աստղը», պիեսները: Կալդերոնի ստեղծագործությունը: | 2 | Բանավոր հարցում | ՊԳ1 |
| 2. | Կլասիցիզմ: Պիեր Կոռնելի ստեղծագործության հիմնական փուլերը: Ժան Բատիստ Մոլիերի թատերգության տեսակների բազմազանությունը: Ժան Ռասինի թատերգությունը: | Կլասիցիզմի առաջացումը, գաղափարագեղագիտական հիմքերը: Կլասիցիզմի թատերգությունը զարգացման առաջին շրջանում: «Սիդ»-ը և ֆրանսիական ազգային գիտակցությունը XVII դարի առաջին կեսին: Պետության դեմ դավադրության բացահայտումը և անձնական դրդապատճառների | | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 3, 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հաղթահարումը «Հորացիուս» ողբերգության մեջ:<br>Հայկական կերպարները «Պոլիկտոս» ողբերգության մեջ:<br>Կեղծիքի և երեսպաշտության ծաղրը «Տարտյուֆ» կատակերգության մեջ: «Դոն Ժուան»-ի մոլիերյան մշակումը. կերպարի բարոյական անկումը և նրա երգիծական մերկացումը: Մոլիերի հայացքները «Միզանտրոպ»-ում:<br>Կլասիցիզմի բախումի հոգեբանական-բարոյագիտական բնույթը «Ֆեդրա», «Անդրոմաքե ողբերգություններում Ռասինը և հին հունական ողբերգությունը («Եվրիպիդես»): | | | |
| 3. | 18-րդ դարի լուսավորական գրականությունը:<br>Դանիել Դեֆոյի ստեղծագործությունը:<br>Ջոնաթան Սվիֆթ ստեղծագործությունը: | Լուսավորական շարժման հիմնական փուլերը (Անգլիայում՝ XVII դարի վերջ և XVIII դարի սկիզբ, Ֆրանսիայում՝ XVIII դարի կեսեր, Գերմանիայում՝ XVIII դարի վերջին քառորդ և XIX դարի սկիզբը):<br>Դեֆոյի վեպերի ընդհանուր բնութագիրը: «Ռոբինզոն Կրուզո» (1719) վեպի գրական տեսակը: Ռոբինզոնի կերպարը և «Ռոբինզոնադի» էությունը: «Վայրենություն» և «Քաղաքակրթություն»: Դեֆոյի կարծիքը մարդկային կյանքի հիմքերի մասին. անհատ և հանրություն: Վեպը՝ որպես դարաշրջանի ոգու ինքնատիպ արտացոլում: Մարդու ուժը՝ որպես աշխարհը նվաճելու կարողության խորհրդանշան: Դեֆոյի մյուս վեպերը. «Մոլ Ֆլենդերս»:<br>Սվիֆթի «Հեքիաթ տակառի մասին» և «Համեստ առաջարկություն» պամֆլետները:<br>Սվիֆթը՝ բանաստեղծ-երգիծաբան: «Գուլիվերի ճանապարհորդությունները»: Վեպի երգիծական բնույթը: Գուլիվերի կերպարի զարգացումը: | | Բանավոր հարցում | ՊԳ1, 5, 6 |
| 4. | Սենտիմենտալիզմ: Լորենս Սթերն Սթերնի գրական նորարարությունը:<br>Ռոբերտ Բյորնսի ստեղծագործությունը: | Սթերնի բանավեճը 1740-1750-ական թվականների գրողների դեմ: Սթերնի «Դոկտոր Ուորիկի քարոզները» ժողովածուն: Սթերնի վեպերը. «Տրիստրամ Շենդիի՝ ջենտլմենի կյանքն ու կարծիքները» և «Զգացմունքային ճանապարհորդություն». կառուցվածքային և ոճական յուրահատկությունները: | | Բանավոր հարցում | ՊԳ1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մարդու ներքին կյանքի պատկերումը և կենտրոնացումը անհատական-զգացական աշխարհում: Դ. Յումի փիլիսոփայության ազդեցությունը Սթերնի ստեղծագործական մեթոդի ձևավորման գործում:<br>Ռոբերտ Բյորնս. ստեղծագործությունը: | | | |
| 5. | Վոլտերի ստեղծագործական ուղու պարբերացումը:<br>Ժան -Ժակ Ռուսո. ստեղծագործությունը: | Վոլտերը և եկեղեցին: Դասականապաշտության և գաղափարապաշտության համադրությունը Վոլտերի ստեղծագործական մեթոդի մեջ: Լուսավորականությունը և Վոլտերի թատերգությունը:<br>Վոլտերի փիլիսոփայական արձակը: «Կանդիդ» Ռուսոյականության էությունը. բնություն և քաղաքակրթություն:<br>Ռուսսոն արվեստի մասին: | | Բանավոր հարցում | ՊԳ1, 7, 8 |
| 6. | Դենի Դիդրոյի և Լեսսինգի տեսությունը դրամայի և թատրոնի մասին:<br>Պիեր Բոմարշեի կատակերգությունները: | Դ. Դիդրոն և հանրագիտակները: Դիդրոն՝ քննադատ, տեսաբան, «Հանրագիտարան»-ի ստեղծող: Ազնվական արվեստի քննադատությունը:<br>«Ռամոյի ազգականը» վիպակը և ազնվականության քննադատությունը:<br>Պիեր Բոմարշե. «Սևիլյան սափրիչ», «Ֆիգարոյի ամուսնությունը», «Հանցագործ մայրը»: | 2 | Բանավոր հարցում | ՊԳ1, 7, 9 |
| 7. | Գոտհոլդ Էֆրաիմ Լեսսինգի գեղագիտական հայացքների ձևավորումը և զարգացում:<br>Յոհան Քրիստոֆեր Ֆրիդրիխ Շիլլեր ստեղծագործությունը: | Ֆրանսիական դասականապաշտության քննադատությունը: Լեսսինգը՝ դրամայի տեսակի ստեղծող գերմանական գրականության մեջ («Էմիլյա Գալոտի», «Նաթան իմաստուն»):<br>Շիլլերի պատմական թատերգությունները 1790-ականներին և 1800-ականներին: Լուսավորական տարրերը և գաղափարապաշտության բանարվեստը: «Վիլհելմ Տելը»՝ որպես հակաբռնակալական դրամա: Շիլլերի թատերգության ոճական առանձնահատկությունները: Շիլլերը բանաստեղծ՝ բալլադները և քնարերգությունը: | | Բանավոր հարցում | ՊԳ1, 9, 10 |
| 8. | Յոհան Վոլֆգանգ Գյոթեի ստեղծագործական ուղու | Վ. Գյոթեն՝ նոր շրջանի գերմանական գրականության հիմնադիր: | | Բանավոր | ՊԳ1, 11 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պարբերացումը: | «Երիտասարդ Վերթերի տառապանքները» (1774)՝ որպես հոգեբանական-զգացական վեպ: Վերթերը՝ նոր մարդու կերպար: Վերթերի ներքին դրաման: Գլխավոր կերպարները (Ֆաուստ, Մեֆիստոֆել, Մարգարիտ, Հեղինե, Վագներ և այլք): Ֆաուստի կերպարի փիլիսոփայական և գեղարվեստական նշանակությունը: | | հարցում | |

## 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Աշխատանքի տեսակը[7] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[8] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պիեր Կոռնելի թատերգության քաղաքական ուղղվածությունը: Անձնականի և պետականի բախումը: Անձնականի ստորադասումը պետական շահին: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 2. | Ժան Բատիստ Մոլիերի թատերգության տեսակների բազմազանությունը: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 3 |
| 3. | «Դոն Ժուան»-ի մոլիերյան մշակումը. կերպարի բարոյական անկումը և նրա երգիծական մերկացումը: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 3 |

---

[7] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | Դանիել Դեֆոի ստեղծագործական զարգացումը լրագրությունից դեպի գրականություն: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 5 |
| 5. | Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» վեպի գրական տեսակը: Ռոբինզոնի կերպարը և «Ռոբինզոնադի» էությունը: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 5 |
| 6. | Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպի գրական տեսակի հարցը: Վեպի երգիծական բնույթը: Գուլիվերի կերպարի զարգացումը: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 6 |
| 7. | Ռոբերտ Բյորնսի ստեղծագործության բանահյուսական հիմքերը: Շոտլանդական առանձնահատուկ գծերը: «Երկու հովիվ» (1784), «Բարեպաշտ Վիլիի աղոթքը» (1785) երգիծական հակաեկեղեցական պոեմները: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1 |
| 8. | Ռոբերտ Բյորնսի Նրա պոեզիայի տեսակային համակարգը: «Բանաստեղծություններ՝ գրված գերազանցապես շոտլանդական բարբառով» (1786) ժողովածուն: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | Աբբա Պրեվոյի հոգեբանական վերլուծությունների խորությունը «Ասպետ դը Գրիոյի և Մանոն Լեսկոյի պատմությունը» վեպում: Մանոնի կերպարը, սիրո և ինքնազոհության գաղափարները: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 7 |
| 10. | Վոլտեր փիլիսոփայական արձակը: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 8 |
| 11. | Վոլտեր «Կանդիդ կամ Լավատեսություն» վիպակի երգիծական ուղղվածությունը: Կանդիդ և Պանգլոս: Էլդորադոն՝ որպես վոլտերյան երազանքի արտահայտություն: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 8 |
| 12. | Ժան Ժակ Ռուսսոյի «Նոր Էլոիզ» վեպը: Սեն-Պրեյի և Յուլիայի կերպարները: Վեպի նշանակությունը եվրոպական գրականության հետագա զարգացման գործում: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1 |
| 13. | Յոհան Վոլֆգանգ Գյոթե «Երիտասարդ Վերթերի տառապանքները» որպես հոգեբանական-զգացական վեպ: Վերթերը՝ նոր մարդու կերպար: Վերթերի ներքին դրաման: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 11 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14. | Գյոթեի «Ֆաուստ»-ի ստեղծման պատմությունը: Գլխավոր կերպարները (Ֆաուստ, Մեֆիստոֆել, Մարգարիտ, Հեղինե, Վագներ և այլք): Ֆաուստի կերպարի փիլիսոփայական և գեղարվեստական նշանակությունը: Ողբերգության փիլիսոփայական հիմքերը: | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, 11 |
| 15. | Յոհան Քրիստոֆեր Ֆրիդրիխ Շիլլերի «Ավազակներ»-ի գլխավոր կերպարները (Կարլ, Ֆրանց, Ամալյա): | Ռեֆերատ կամ զեկույց | Ստուգարքի շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1 |

### 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[9]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | - |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | |

[9] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[10]:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ամփոփիչ ստուգում և գնահատում կիսամյակի ավարտին (քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով :

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է ամփոփիչ ստուգման միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

---

[10]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

## 14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. 17-րդ դարի գրականության ընդհանուր բնութագիրը:
2. Ջոն Միլթոնի ստեղծագործությունը:
3. Կալդերոնի ստեղծագործությունը:
4. Կլասիցիզմ:
5. Պիեր Կոռնելի ստեղծագործության հիմնական փուլերը:
6. Ժան Բատիստ Մոլիերի թատերգության տեսակների բազմազանությունը:
7. Ժան Ռասինի թատերգությունը:
8. 18-րդ դարի գրականություն. լուսավորություն:
9. Դանիել Դեֆոյի ստեղծագործությունը. «Ռոբինզոն Կրուզո»:
10. Ջոնաթան Սվիֆթ ստեղծագործությունը:
11. Հենրի Ֆիլդինգը որպես անգլիական լուսավորական գրականության ներկայացուցիչ:
12. Սեմյուել Ռիչարդսոնի ստեղծագործությունը:
13. Թոբայաս Ջորջ Սմոլեթի ստեղծագործությունը:
14. Սենտիմենտալիզմ:
15. Լորենս Սթերն Սթերնի գրական նորարարությունը:
16. Ռոբերտ Բյորնս ստեղծագործությունը:
17. Աբբա Պրևոյի ստեղծագործությունը:
18. Վոլտերի ստեղծագործական ուղու պարբերացումը:
19. Ժան -Ժակ Ռուսսո ստեղծագործությունը:
20. Դենի Դիդրոյի տեսությունը դրամայի և թատրոնի մասին:
21. Պիեր Բոմարշեի կատակերգությունները:
22. Գոտհոլդ Էֆրաիմ Լեսսինգի գեղագիտական հայացքների ձևավորումը և զարգացում:
23. Յոհան Քրիստոֆեր Ֆրիդրիխ Շիլլեր ստեղծագործությունը:
24. Յոհան Վոլֆգանգ Գյոթեի ստեղծագործական ուղու պարբերացումը
25. Գյոթե. «Երիտասարդ Վերթերի տառապանքները»:
26. Գյոթե. «Ֆաուստ»:

## 14.4. Գնահատման չափանիշները[11].

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ամփոփիչ ստուգման ժամանակ:
- Գործնական աշխատանքները՝ երկու հարցում՝ 20-ական միավոր գնահատմամբ.:
- Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:

[11] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** **011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **011401.19.6 Հայոց լեզու եւ գրականություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** **Մանկավարժության բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Հեռակա ուսուցման համակարգ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Դասընթացի թվանիշը, անվանումը** | ՀԼԳ/բ-072 «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-3» | | | |
| **Դասընթացին հատկացվող կրեդիտը** | 2 կրեդիտ | | | |
| **Ուսումնառության տարի / կիսամյակ** | 2-րդ տարի, 2-րդ կիսամյակ | | | |
| **Ժամերի բաշխումը** | Լսարանային | 8 | Դասախոսություն | 4 |
| | | | Գործնական աշխատանք | 4 |
| | Ինքնուրույն | 52 | | |
| | Ընդամենը | 60 | | |
| **Ստուգման ձևը** | ստուգարք | | | |
| **Դասընթացի նպատակը** | Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 17-րդ, 18-րդ դդ. արևմտաեվրոպական գրականության ընդհանուր զարգացումն ու օրինաչափությունները, հատկանշական կողմերն ու տարբերակիչ առանձնահատկությունները: Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր գիտելիքները արտասահմանյան գրականությունից: Նախապատրաստել արտասահմանյան գրականության հաջորդող պատմաշրջանների հետագա ուսումնասիրությանը: | | | |
| **Դասընթացի վերջնարդյունքները** | Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br><br>*Գիտելիք*<br>• **իմանա** ուսումնասիրվող գրական դարաշրջանի հետ կապված տերմիններն ու հասկացությունները, գրական դարաշրջանի հիմնական փուլերը, կարողանա կողմնորոշվել նշված դաշտում:<br><br>*Հմտություն*<br>• **տիրապետի** գեղարվեստական տեքստի գրականագիտական վերլուծության հմտություններին, կարողանա մեկնաբանել այն և բացատրել գեղարվեստական ստեղծագործության պոետիկայի և ոճի առանձնահատկությունները:<br><br>*Կարողունակություն*<br>• **կարողանա** ընդհանուր կերպով ներկայացնել առանձին գրողի | | | |

| | |
|---|---|
| | ստեղծագործությունը, որոշարկել պատմա-գրական և մշակութային հարընթացի մեջ նրա տեղն ու դերը, կարողանա պատմել գրողի ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունների մասին, կատարել ընդհանրացնող եզրակացություններ գրողի ստեղծագործության մասին: |
| **Դասընթացի բովանդակությունը** | *Թեմա 1.* 17-րդ դարի գրականություն:<br>Ներածություն:<br>Ջոն Միլթոնի ստեղծագործությունը: Լոպե դե Վեգայի և Պեդրո Կալդերոնի ստեղծագործությունը:<br>Կլասիցիզմ: Պիեր Կոռնելի ստեղծագործության հիմնական փուլերը:<br>Ժան Բատիստ Մոլիերի թատերգության տեսակների բազմազանությունը:<br>Ժան Ռասինի թատերգությունը:<br>*Թեմա 2.* 18-րդ դարի լուսավորական գրականություն:<br>Դանիել Դեֆոյի ստեղծագործությունը:<br>Ջոնաթան Սվիֆթի ստեղծագործությունը:<br>Սենտիմենտալիզմ: Լորենս Սթերն: Սթերնի գրական նորարարությունը:<br>Ռոբերտ Բյորնս ստեղծագործությունը:<br>*Թեմա 3.* Վոլտերի ստեղծագործական ուղու պարբերացումը:<br>Ժան-Ժակ Ռուսսոյի ստեղծագործությունը:<br>Դենի Դիդրոյի և Լեսսինգի տեսությունը դրամայի և թատրոնի մասին:<br>Պիեր Բոմարշեի կատակերգությունները:<br>*Թեմա 4.* Գոտհոլդ Էֆրաիմ Լեսսինգի գեղագիտական հայացքների ձևավորումը և զարգացումը:<br>Յոհան Քրիստոֆեր Ֆրիդրիխ Շիլլերի ստեղծագործությունը:<br>Յոհան Վոլֆգանգ Գյոթեի ստեղծագործական ուղու պարբերացումը: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | ▪ Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ամփոփիչ ստուգման ժամանակ:<br>▪ Գործնական աշխատանքները՝ երկու հարցում՝ 20-ական միավոր գնահատմամբ.:<br>▪ Ինքնուրույն աշխատանքը` երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ: |
| **Գրականություն** | *Պարտադիր*՝<br>Արտամոնով, XVII-XVIII դդ. արևմտաեվրոպական գրականության պատմություն<br>*Գեղարվեստական գրականություն*<br>Պիեր Կոռնել «Սիդ» |

| | |
|---|---|
| | Ժան Բատիստ Մոլիեր «Դոն Ժուան, «Միզանտրոպ»<br>Ժան Ռասին «Ֆեդրա»<br>Դանիել Դեֆո «Ռոբինզոն Կրուզո»<br>Ջոնաթան Սվիֆթ  «Գուլիվերի ճանապարհորդությունները»<br>Աբբա Պրևո «Ասպետ դը Գրիոյի և Մանոն Լեսկոյի պատմությունը»<br>Վոլտեր  «Կանդիդ կամ Լավատեսություն»<br>Դենի Դիդրո «Միանձնուհի»<br>Գոտհոլդ Էֆրաիմ Լեսինգ «Էմիլյա Գալոտի», «Նաթան իմաստուն»<br>Յոհան Վոլֆգանգ Գյոթե «Երիտասարդ Վերթերի տառապանքները», «Ֆաուստ» |